

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻՆ ՇՈՒՐՋ ԺՈՂՈՎ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

Զորեֆշաբթի ուշ գիշերին ՊԻ. ՊԻ. ՍԻ. ձայնասփիւռի կայանը հաղորդեց թէ Մոսկուայի մէջ ժողով / մը գումարուած է կորպաչովի գլխաւորութեամբ, / Ղարաբաղի տազնապին շուրջ, որու ընթացքին Սովետ Միութեան դեկավարը զգուշացուցած է Հայաստանի եւ Ատրպէյջանի միջեւ տիրող այժմու տազնապէն եւ ընդգծած թէ «եթէ երկու ժողովուրդներու յարաբերութեանց յաւելեալ վատթարացման առիթ տրուի, հորհրդային Միութեան ժողովուրդը պիտի կորսնցնէ 70 տարիներու ընթացքին իր ձեռք բերած յաջողութիւնը»:

ՊԻ. ՊԻ. ՍԻ., որ իր տեղեկութիւնները քա-

ղած է Մոսկուայի հեռատեսիլէն, կ'աւելցնէ թէ այդ ժողովին ներկայ եղած են պետական վերին պատասխանատուներ՝ Գերագոյն Սովետի նախագահ Անտրէ կրումիֆօ եւ վարչապետ Նիկոլայ Ռիժնով: Ժողովը կացութեան մասին տեղեկագիրներ լսած է Հայաստանի եւ Ատրպէյջանի Համայնավար կուսակցութեանց ղեկավարներէն, ապա անոնց թելադրած է պատրաստել ամբողջական տեղեկագիր մը, որ բովանդակէ հարցերու խոր ուսումնասիրութիւն մը վիճելի հոգամասին շուրջ, ոչ ոք կացութեան վատթարացման պատճառները եւ պատրաստէ հարցի լուծման նախագիծ մը: